

գամ: Նախ էջ 375, ուր կ'ըսէ. «Եւ ի նոյն ամի տէր Ներսէս ի փղիպեան (պէտք է ըլլայ Փղիպեան)' սպան զՎարազ Տրդատ ի Ստեփանոսեան, եւ զորդի նորին ի մօրն զոգ զենին եւ զամենայն ստացուածս նորա յափշտակեցին»:

Ի նոյն ամի՝ հոս Վասակ Սիւնիի մեռնելուն եւ Բարեկի անոր աղջկան հետ ամուսնանալուն համար է, 821-22ին:

Կաղանկատուացիի շարունակողը կը կրկնէ ասիկա աւելի մանրամասնութեամբ. «Չայս Վարազ Տրդատ (Միհրեան-Եռանշահիկ) եւ զորդի նորա Ստեփանոս, Ներսէս ի Փիլիպեան՝ աղբակից նորա սպան ի միում ժամու ի խորածորն՝ որ կոչի Գաղոյի վանք: Այս յայն աղետիցն զտոն զգեցեալ զարութիւն կնոջն սպանելոյն՝ առեալ զմնացեալ իւր գուտարըն Սպրամ զիշերահէն տաժանելի ուղեւորամբ՝ մտանէ ի բերդն Խաչենոյ՝ եւ բարուօք խորհեալ տան իւրում՝ ամուսնացուցանէ զՍպրամ ընդ Ատրնեբսէի՝ Սահլի որդւոյ, որ էր ի Տոհակայ եւ տէր Սիւնեաց եւ բռնադրութեամբ կալեալ էր զգաւառն Գեղամայ. եւ որդի նորա Ատրնեբսէս հանդիպեցաւ կնոջ զգաստի, որք երկիրգածք յԱտուծոյ եւ բարեպաշտք զիւրեանց ցուցանէին զկեանս եւ աշխարհի բաղցունք» (էջ 388-9):

Այս երկու իրար ամբողջացնող վկայութեանց համաձայն կը տեսնենք որ Գաղոյի վանքին, այժմ ծանօթ իրր Գաղի վանք (Խուլթայ վանք) Աղուանից, այսինքն արեւմտեան կողմը գաւառին, խորունկ ձորի մը մէջ Վարազ Տրդատ, իր կինը եւ նորածին որդին Ստեփաննոսը յարձակման կենթարկուին Փիլիպեան Ներսէսէ: Վարազ Տրդատ կը սպանուի, ինչպէս նաեւ իր մանկիկ Ստեփաննոս որդին, նոյնիսկ իր մօր զրկին մէջ: Վարազ Տրդատի կինը եւ Սպրամ գուտարը հազիւ կ'ազատին եւ զիշերով փախստական՝ մեծ նեղութեամբ կ'ապաստանին բերդն Խաչենոյ: Հոն կ'ամուսնացնէ իր Սպրամ գուտարը Սահլի որդի Ատրնեբսէի հետ:

Այս յիշատակութեան մէջ կը յիշուի որ Սահլ (Մարատեան) տէր էր եղած Սիւնեաց եւ կը տիրապետէր Գեղամայ գաւառին: Ասիկա անշուշտ պատահեցաւ Բարակի այդ կողմերը ասպատակելէն յետոյ: Սահլի համար կ'ըսուի նաեւ որ էր ի Տոհակայ: Ինծի կարելի չեղաւ գտնել վայրս:

Այսպէս Սահլի յաջորդ եւ որդի ունինք Ատրնեբսէս, որ ամուսնացած էր Վարազ Տրդատի աղջկան՝ Սպրամի հետ: Կաղանկատուացիի շարունակողը երկար կը խօսի Ատրնեբսէի մասին ըսելով. «Սա Ատրնեբսէս շինէ զբերդն Հանդու, եւ զապարանս իւր դնէ ի գիւղն, որ կոչի Վայունիք, ուր եւ բաղանիք են արքունական» (էջ 389):

Վայունիք կամ Վայկունիք Արցախի մէջ էր, Գեղարքունեաց Մար աւանին մօտ: Հոս էր Հանդուբերդ կամ Հանդաբերդ:

Թուրքա Արժրունի կը վկայէ որ Բուղայի կողմէ 853ին Սամառայ աքորուած հայ իշխաններուն մէջ էր «Մահլ (Սահլ) Սըմբատայ որդի, Շաքեոյ տէր, որ զբարանն (սրբազրէ զԲարանն) կալաւ»: Իսկ ասիկ քիչ առաջ նոյն ցանկին մէջ կը յիշէ «Ատրնեբսէս Աղուանից իշխանն» (էջ 310), առանց յիշելու որ Ատրնեբսէս որդին էր Սահլ Մարատեանի: Կաղանկատուացիի շարունակողը կը վկայէ որ «գնա (Ատրնեբսէսը) տարան ընդ այլ իշխանս յերկիրն Պարսից. եւ կալով նորա անդ ամս բազումս տիկինն Սպրամ յառաւել բարեգործութիւնս յաճախէր. եւ մեծածախ տենչմամբ շինէր զնորափանս ի գաւառին Սողէից ամենապայծառ զարգուք: Եւ իսկոյն գայր Ատրնեբսէս զերծեալ ի կողմանցն Տաճկաց. եւ խաղաղութեամբ զտոժամայնն լուծանէ կեանս» (էջ 389):

Ակնարկութիւնը Բուղայի աքորին մասին է, երբ Սահլ եւ իր որդին Ատրնեբսէս ուրիշ հայ իշխաններու հետ Սամարա աքորուեցան 853ին: Մինչ ինք աքորուած էր՝ իր տիկինը Սպրամ կը զբաղէր շինա-